Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/11>> ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 5 մանկապարտեզի վերակառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 03 օգոստոս 2017թ.
Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Ջանջուղազյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ռ. Եղիազարյան/ գնահատող /
	Ա. Գրիգորյան/ գնահատող /
	Գ. Գևորգյան/ բացող/
	Ֆ. Սարգսյան/ բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/11>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

- Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել են առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և կոմիտեի կողմից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ _____ Ռ. Եղիազարյան

_____ Ա. Գրիգորյան

_____ Գ. Գևորգյան

_____ Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Տ. Վասիլյան